



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«10» 06 2026 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 076 - 26

Նախաձեռնող՝

«ԷՎԵԼՊԻՍ» ՍՊԸ

Լոռու մարզ, Վանաձոր համայնք, Խորենացու փ., 1 Գ/Ե

Գործունեությունը՝

ՓՈՔԻ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ

Լոռու մարզ, Փամբակ համայնք, Վահագնաձոր բնակավայր

Առդիր՝ 6 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 076 - 26

«10» հունիսի 2026թ.

Վահագնաձոր բնակավայրի վարչական տարածքում «Վահագնաձոր» փհէկի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷՎԵԼՊԻՍ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Փամբակ խոշորացված համայնք, Վահագնաձոր բնակավայր

Ներածական մաս. «ԷՎԵԼՊԻՍ» ՍՊԸ ընկերությունը նախատեսում է Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Վահագնաձոր բնակավայրի վարչական տարածքում՝ Փամբակ գետի ձախ ափին կառուցել փոքր հիդրոէլեկտրակայան /փհէկ/ 2.5 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի «ժա» ենթակետի՝ ներկայացված գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակի: «Վահագնաձոր» փհէկի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է՝ հիմք ընդունելով հողատարածքների սեփականության վկայականները՝ N 03012023-06-0045, N 28022022-06-0041 շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվությունը՝ N 254-24, տրված 20.06.2024թ, Փամբակ համայնքի կողմից տրված նախագծման թույլտվությունը՝ N 12 տրված՝ 23.12.2024թ.

Նկարագրական մաս. «Վահագնաձոր» փհէկը նախատեսվում է կառուցել Հայաստանի Փամբակ գետի ձախ ափին: Էլեկտրաէներգիա արտադրելու համար օգտագործվելու է Փամբակ գետի 1070.0-1010.0 մ նիշերի միջև 60.0 մ անկումը: Նշված անկումը 3480մ երկարությամբ, 2220 մ տրամագծի մետաղական ճնշումային խողովակաշարով Փամբակ գետի մնացորդային ելքերը կմոտեցնի նախատեսվող փհէկի շենքին:

«Վահագնաձոր» փհէկի բոլոր կառույցները գտնվում են Վահագնաձոր բնակավայրի վարչական սահմաններում:

«Վահագնաձոր» փհէկն իր մեջ ներառում է հետևյալ կառուցվածքները

- գլխային հանգույց, որի մեջ ընդգրկված են ջրթափային պատվար, ջրընդունիչ, վացիչ ջրանցք և ձկնուղի,



- 2200մմ տրամագծով և 16-17 մմ պատի հաստությամբ, 3480մ երկարությամբ ճնշումային մետաղական խողովակաշար,
- փիէկի շենք,
- հեռացնող ջրանցք, որով կհեռացվի ագրեգատների օգտագործած ջուրը:

Ճնշումային մետաղական խողովակաշարի երկարությունը 3480.0 մ է, տրամագիծը՝ 2220մմ, Ֆրենսիս տիպի 2 հիդրոագրեգատ 3.0 մ³/վ ելքով և 51 մ ստատիկ ճնշմամբ (Եվրոպական արտադրության): Գլխային հանգույցն իրենից ներկայացնում է ջրթափային պատվար, ջրընդունիչ, լվացիչ ջրանցք և ձկնանցարան:

Ջրթափային պատվարը, որն ունի 9.0 մ բարձրություն, 11.4 մ լայնություն և 10.0 մ ջրթափային ճակատի երկարություն, նախատեսված է անհրաժեշտ նորմալ դիմհարային մակարդակ (այսուհետ՝ ՆԴՄ) ստեղծելու և 3% ապահովվածության ելքերի բաց թողնման համար:

Քանի որ «Վահագնաձոր» փիէկը դասվում է III կարգի կառուցվածքների շարքին (СНП 2.06.01-86), ուստի գլխային հանգույցի գետահատվածում հաշվարկային առավելագույն ելքերի տարեկան գերազանցման հավանականությունը հիմնական դեպքերի համար ընդունվում է 3%, որը Փամբակ գետի համար կազմում է 101.0 մ³/վ: Պատվարի բարձրությամբ պայմանավորված տղմագտարանի կառուցումը համարվում է ոչ նպատակահարմար, քանի որ այս պարագայում պատվարը հանդիսանում է բնական պարզարան և ջրառի նիշը գտնվում է մեռյալ ծավալից բարձր: Ջրթափային պատվարի կատարի նիշը (ՆԴՄ) 1065.0մ է: Մեռյալ ծավալի նիշը նախնական հաշվարկներով կազմում է 1057.0մ, իսկ խողովակաշարի հատակի նիշը՝ 1057.0մ:

Ջրընդունիչն ունի երկու փական՝ հիմնական և վթարային: Այն նախատեսված է 6.0մ³/վ ելքը ճնշումային խուց մատակարարելու համար, որից հետո էլ ճնշումային խողովակաշար անցկացնելու համար:

Քանի որ «Վահագնաձոր» փիէկը օգտագործում է գետի բնական ելքերը, առաջնահերթ նշանակություն ունեցող կառույց է ձկնանցարանը, որը գլխային հանգույցի հատվածում պետք է ապահովի ձկների անցումը գետի երկայնքով: Ձկնանցարանը երկաթբետոնե կառուցվածք է՝ 25.0մ երկարությամբ և 30 ջրավազաններով: Վերջիններիս մեջ ապահովվում են ջրի անհրաժեշտ խորությունն ու հոսքի արագությունը՝ ձկների և այլ ջրային օրգանիզմների տեղաշարժն ապահովելու համար՝ ինչպես ստորին, այնպես էլ վերին բիեֆների միջև: Վահագնաձոր փիէկի գլխային հանգույցում նախագծված աստիճանաձև ձկնուղու հիդրավլիկական հաշվարկի արդյունքում ձկնուղով անցնող ելքը ստացվում է 0.77մ³/վ: Ձկնուղով անցնող ջրաքանակը նախատեսված է բացառապես ձկների ազատ տեղաշարժի ապահովման համար և ունի սահմանափակ ծավալ: Մինչդեռ բնապահպանական հոսքը, որն ապահովում է գետի էկոհամակարգի պահպանությունը, տվյալ նախագծում իրականացվում է լվացիչի միջոցով՝ փականի տակով արտահոսքի ձևով:

Հետևաբար, ձկնուղին չի դիտարկվում որպես բնապահպանական հոսքի փոխարինող, այլ հանդիսանում է առանձին ֆունկցիոնալ տարր՝ ուղղված կենսաբանական անցանելիության ապահովմանը:



	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Բնապ. ելքերը, մ ³ /վ	2.71	2.65	3.14	5.07	4.19	3.52	2.76	2.42	2.42	2.67	2.57	2.51
Ձկնուղով անցնող ելքերը, մ ³ /վ	0.77	0.77	0.77	0.77	0.77	0.77	0.77	0.77	0.77	0.77	0.77	0.77
Լվացիչով անցնող ելքերը, մ ³ /վ	1.94	1.88	2.37	4.3	3.42	2.75	1.99	1.65	1.65	1.9	1.8	1.74

Նշվածից հետևում է, որ ձկնուղով անցնող հոսքի մեծության չափը պայմանավորված է ձկների տեղաշարժի համար անհրաժեշտ արագությունների ճիշտ ընտրությամբ: Հետևաբար, մեծ ելքերի դեպքում ձկնուղում կառաջանան մեծ արագություններ, որը կբերի ձկնուղու, որպես հիդրոտեխնիկական կառույցի անպիտանության: Ձկնուղու և գետի լծորդման հատվածում նախատեսվում է տեղադրել ջրաչափիչ սարքավորում: Ջրընդունիչից հետո ճնշումային խողովակաշարը ձգվելու է գետի աջ ափով:

Ճնշումային մետաղական խողովակաշարի երկարությունը կազմում է 3480.0 մ, տրամագիծը՝ 2200 մմ: Խողովակի պատի հաստությունը ընդունված է 14–16 մմ՝ հաշվի առնելով դատարկ վիճակում խողովակաշարի սեփական քաշի ազդեցությամբ հնարավոր դեֆորմացիաները:

Խողովակաշարի տեղադրման համար նախատեսվում է փորել սեղանաձև կտրվածքով խրամուղի՝ հատակի 3.4 մ լայնությամբ, շեփերի 3:1 թեքությամբ և 3.1 մ խորությամբ:

Պողպատե խողովակաշարը նախատեսվում է տեղադրել և մոնտաժել 0.3 մ հաստությամբ ավազային հիմքի վրա:

Կայանային հանգույցի հրապարակի նիշը ընդունվում է ներքին բիեֆում ջրի մակարդակի նիշից (1010.0մ) 1.0 մ բարձր: Փհէկի շենքի պլանային չափսերը նախատեսվում են 9.8×28.0 մ: Շենքում տեղադրվելու են Ֆրենսիս տիպի երկու հիդրոագրեգատներ:

«Վահագնաձոր» փհէկի շենքում նախատեսված է ագրեգատների հսկման և կառավարման համակարգ: Նախատեսվում են նաև մոնտաժային հրապարակ՝ վերանորոգման աշխատանքների համար, ինչպես նաև շահագործող անձնակազմի համար նախատեսված օժանդակ շինություններ և սանհանգույց:

Փհէկի կայանային հրապարակում նախատեսվում է տեղադրել 6/110կՎ բաց բաժանարար սարքավորում՝ էլեկտրաէներգիան բարձր լարման ցանցին մատակարարելու նպատակով:

Հեռացնող ջրանցքով հիդրոագրեգատների կողմից օգտագործված ջուրը վերադարձվում է Փամբակ գետ: Ջրանցքի սկզբնամասում ջրի մակարդակի նիշը կազմում է 1010.0 մ: Հեռացնող ջրանցքի երկարությունը 20 մ է, թեքությունը՝ 0.004: Այն ունի ուղղանկյուն հատույթ՝ 3.0 մ լայնությամբ և 2.0 մ բարձրությամբ: Ջրի խորությունը ջրանցքում կազմում է 1.6 մ, իսկ հոսքի արագությունը՝ 2.0 մ/վ: Նախագծով «Վահագնաձոր» փհէկ-ում նախատեսվում է տեղադրել 2 հիդրոագրեգատ՝ համալրված սինքրոն գեներատորներով:



Յուրաքանչյուր գեներատորի նոմինալ հզորությունը կազմում է 1600 կՎտ, լարումը՝ 6.3 կՎ: Գեներատորների ընդհանուր տեղակայված հզորությունը կազմում է 3200 կՎտ: Տուրբինների նոմինալ հզորությունը յուրաքանչյուրի համար կազմում է 1560 կՎտ, իսկ կայանի հաշվարկային հզորությունը՝ 2568 կՎտ:

Նախագծով ընդունված գեներատորները նախատեսված են աշխատելու միասնական էներգահամակարգի հետ, և կայանի կողմից արտադրված ամբողջ հզորությունը փոխանցվում է էներգահամակարգ: Փհէկի միացումը նախատեսվում է իրականացնել «Վահագնի-2» 110 կՎ օդային գծի «Շահալի» ՔԵԿ-ի 110 կՎ ճյուղավորման թիվ 12 հենարանին՝ կառուցելով մոտավորապես 300-500 մ երկարությամբ 110 կՎ օդային գիծ: Հենասյուններ չեն տեղադրվելու նման օդային գծերի միացումների համար:

Պարճառարանական մաս. Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ առողջապահության և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի և ջրային կոմիտեները, Լոռու մարզպետի աշխատակազմը, «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ Վահագնաձոր բնակավայրում կայացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը, որի ընթացքում բարձրացվել են հարցեր և առաջարկներ՝ գործունեության իրականացման վերաբերյալ:

Փամբակ գետի վրա հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագծի շրջանակում իրականացված փորձաքննությամբ հաշվի են առնվել ինչպես էներգետիկ օգուտներն, այնպես էլ՝ հնարավոր էկոհամակարգային, սոցիալ-տնտեսական և մշակութային ռիսկերն ու վնասները:

Տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել համաձայն մասնագետի կողմից իրականացված տեղազննման եզրակացության: Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու կամ բացառելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական մեղմման միջոցառումներ:

Գործունեության և հարակից տարածքները չեն առնչվում հատուկ պահպանվող տարածքների հետ: Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են՝

- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ,
- օդային ավազանի՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում արտանետումների, հողային աշխատանքների՝ գրունտի քանդման, փորման հետվիցքի հետ,
- հողային, ջրային ռեսուրսների օգտագործման հետ,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման հետ:



Շահագործման փուլում աղմուկի մակարդակը կապված է լինելու փիհէկի սարքավորումների աշխատանքի հետ, ինչի համար կնախատեսվեն նորագույն տեխնոլոգիաներով հագեցած սարքավորումներ, որը նվազագույնի կհասցնի աղմուկի և թրթռման մակարդակները շրջակայքում:

Գետի բնական հոսքի և գետում կենսաբազմազանության պահպանման ուղղությամբ ապահովված է լինելու ջրի նվազագույն թողքը գետում:

Շահագործման փուլում մարդու առողջության համար պոտենցիալ վտանգ կարող է առաջանալ աշխատողների աշխատանքային անբավարար պայմանների, էլեկտրահարման, վթարների առաջացման պատճառով: Հաշվետվությունում նախատեսվել են համապատասխան միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության պահպանմանը:

Ընկերության կողմից համայնքին և բնակավայրին սոցիալական աջակցությունների տրամադրման լայն շրջանակ է նախատեսվել, որը ամրագրված է համապատասխան հուշագրով:

Շինարարական աշխատանքների համար ծառահատումներ նախատեսված չեն՝ համաձայն հաշվետվության, սակայն փորձաքննական գործընթացում տեղազննման արդյունքով փաստվեց, որ տարածքում առկա են տարբեր տեսակի ծառաթփային կազմ և հնարավոր հատման ենթակա տեսակներ, որոնք փիհէկի շենքն ընդգրկող տարածքում են գտնվում: **Փիհէկի շենքի և պատվարի կառուցման տարածքը պատկանում է Ընկերությանը սեփականության իրավունքով և չի ընդգրկում անատառային հողեր:** Համաձայն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության՝ 06-102-0249-0004 կադաստրային ծածկագրով, 1.0159 հա մակերեսով տարածքից շուրջ 0.6 հա գտնվում է շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի Եղեգնուտի անտառապետության 14-րդ քառակուսու 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ հատվածներում և Վահագնիի անտառապետության 30-րդ քառակուսու 8-րդ, 32-րդ հատվածներում. 06-102-0249-0004 կադաստրային ծածկագրով 1.0159 հա մակերեսով տարածքից շուրջ 0.6821 հա և 06-102-0012-0048 կադաստրային ծածկագրով 0.19134 հա մակերեսով տարածքից շուրջ 0.16134 հա ըստ արբանյակային պատկերների անտառածածկ են և նախատեսվող աշխատանքների ժամանակ գրությամբ առաջարկվել է ապահովել «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի աշխատակցի ներկայությունը և աշխատանքների ժամանակ հատվող ծառերին հասցվող հնարավոր վնասը փոխհատուցել: Աշխատանքների կազմակերպման շրջանակներում ընկերությունը համայնքի հետ համաձայնեցված կարգով պարտավորություն է ստանձնել իրականացնել խողովակաշարերի անցկացման հետևանքով հնարավոր հատման ենթակա ծառերի գույքագրում՝ գործընթացում ներգրավելով նաև լիազոր մարմնի մասնագետներին: Միաժամանակ նախատեսվում է համայնքի հետ համաձայնեցված վայրում ապահովել վերատնկման ենթակա ծառերի տեղափոխումն ու հետագա խնամքը: Այն ծառերը, որոնց վերատնկումը տեխնիկապես կամ կենսաբանական տեսանկյունից հնարավոր չի լինի, նախատեսվում է օգտագործել, որպես փայտանյութ և տրամադրել տեղի բնակչությանը:



ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՇՏՊԱՆՆԵՐ

1. Աշխատանքների ժամանակ անտառածածկ տարածքներին հնարավոր հասցված վնասի դեպքում իրականացնել փոխհատուցում՝ գործող իրավակարգավորումներին համապատասխան:
2. Բացառել շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական և կենցաղային թափոնների կուտակումը գետի հարակից տարածքներում և դրանց հնարավոր արտանետումը գետային համակարգ:
3. Կառուցապատման ընթացքում ապահովել Կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջները:
4. Ապահովել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով և 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:
5. Ապահովել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից 20.06.2024 թ. տրամադրված N 254-24 ջրօգտագործման թույլտվության ժամկետի սահմանված կարգով երկարաձգումը և թույլտվությամբ նախատեսված պայմանների անվերապահ կատարումը, մասնավորապես՝ տարվա բոլոր ամիսներին սահմանված բնապահպանական (էկոլոգիական) թողքերի/ելքերի ապահովումը և գետի էկոհամակարգի բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ ջրաքանակի պահպանումը:

ԵԶՐԱՓՈՒԿՅ ՄԱՍ

«ԷՎԵԼՊԻՍ» ՍՊ ընկերության կողմից Վահագնաձոր բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող «Վահագնաձոր» փհէկի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված պարտադիր կատարման ենթակա պահանջների իրականացման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Հերիցնազ Մկրտչյան

Շուշանիկ Կարապետյան